ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1959 Общественные науки

Գ. Տ. Խալաթյան

ՇԻՐԱԿԱՑՈՒ ԻՄԱՑՍԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Միջնադարյան եկեղեցին, որը փաստորեն իր ժամանակաշրջանի մշակույթի մենատերն էր, իր հնարած դրույթները համարում էր բացարձակ ճշմարտություն և ամեն մի մտածողության հիմք ու հայկետ[1]։ Միջնադարյան իմացաբանությունը հիմնականում զարգացել է այդպիսի ճշմարտություններ հաստատելու, պարզաբանելու և քննադատելու ճանապարհով։ Այդ ժամանակաշրջանում իմացաբանության նպատակը ոչ թե ճանաչողության պրոցեսի ուսումնասիրությունն է եղել, նրա էտապների յուրահատկության ու փոխհարաբերության բացահայտումը, այլ այս կամ այն դոգմայի ճշտությունն ու հակառակորդի տեսակետի սխալի հաստատումը։

Հենվելով ավետարանի այն գրույթի վրա, որ աստծո և քրիստոսի խորհրդի «մեջ պահպանված են իմաստության և գիտության գանձերը»- եկեղեցին պնդում էր, որ աստված բոլոր ճշմարտությունների վերջնական աղբյուրն է[3]։ Որոշ եկեղեցականներ ընդունելով հանդերձ զգայականի գոյությունը՝ պնդել են, որ անցողիկ աշխարհը սեփական բովանդակություն չունեցող մի ձև է, որի էությունը գտնվում է անտեսանելի իդեայի՝ աստծո մեջ։ Ըստ նրանց, մարդկային իմացությունը լավագույն դեպքում կարող է գիտակցել զգայական աշխարհի իրերի գոյությունը և ոչ թե իմանալ նրա էությունը, քանի որ այն էություն չունի։ Աշխարհի էությունն աստծո մեջ է։ Ճշմարտությունների վերջնական աղբյուրը համարելով աստծուն՝ եկեղեցին գտնում էր, որ նրանց ձեռք բերման հիմքը հավատն է, որ «մարդ հավատի միջոցով կբարձրանա ճշմարտություններ ճանաչելու»[4], իսկ այդ հավատը իր հերթին պետք է հենվի ոչ թե մարդկանց իմացության վրա, այլ աստծո զորության։

Անկասկած այդպիսի տեսակետները արգելակում էին գիտության և մարդկային իմացության զարգացումը։ Նրա դեմ զանազան ձևերով տարված պայքարը, հետևաբար, նպաստում էր գիտության առաջընթացին։ Ընդունելով հանդերձ հոգու առաջնությունը, բնության աստվածային ստեղծագործությունը՝ ժամանակի առաջավոր մտածողները փորձել են վերացնել գիտության ու փիլիսոփայության զարգացումը կաշկանդող արգելակները և այդպիսով օբյեկտիվորեն թուլացրել են ժամանակի կրոնական սխոլաստիկան։ Խոսելով միջնադարյան գիտության զարգացման մասին Ֆ. Էնգելսը գրում է. «Խոսքն այստեղ ամենևին

---

[1] *Տե՛ս* К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. I, стр. 295.

[2] *Թուղթ առ կողոսացիս. Բ. 23։*

[3] *Տե՛ս Խորեն եպիսկոպոս Մխիթարյան, Սկզբունք նյութական իմաստասիրաց և քրիստոնյա աստվածաբանության, կ. Պ., 1894, էջ 102, Սրբոյն հօրն մերոյ երանելոյն Գրիգորի լուսաւորչի յաճախապատում ճառք. Էջմիածին, 1834, էջ 22, 48, 70։*

[4] *Տե՛ս Յաճախապատում, էջ 137, Եղնիկ. Եղծ աղանդոց, էջ 137, Խորեն Մխիթարյան, Նշվ. աշխ., էջ 97, Հովհան Որոտնեցի, Հավաքեալ ի բանից իմաստասիրաց—Բանբեր Մատենադարանի, № 3, Երևան, 1956, էջ 377—378, 383։*

և այս երկու հակադրամետ գաղափարների ողջ իդեալական բովանդակության պարզապես դեն շպրտելու մասին չէ, այլ նրա քննադատության, իր ժամանակի և զարգացման բուն ընթացքի համար անխուսափելի իդեալիստական ձևի շրջանակներում ձևռք բերված արդյունքներն այն անցողիկ ձևից կճպելու մասին»[5]։ Մարքսիստ հետազոտողը պետք է կարողանա թափանցել հարցի էության մեջ և բացահայտել այն առաջավորը, դրականը, որ սքողված է այդ «անխուսափելի իդեալիստական ձևի» տակ։ Բացառված չէ նաև այն հնարավորությունը, որ այդպիսի թեքումների դեպքում հեղինակներն ընդհուպ արտահայտեին մատերիալիստական էլեմենտներ պարունակող տեսակետներ։ Այս առթիվ հիշենք Վ. Ի. Լենինի այն թեզը, որ երբ մի իդեալիստ քննադատում է մի այլ իդեալիստի հիմնական դրույթները, ապա նրանից անպայման շահում է մատերիալիզմը[6]։

Շիրակացին, որպես ժամանակի առաջավոր բնախույզներից մեկը, որը զգալի չափով գտնվում էր VI—VII դդ. Հայաստանում ծավալվող ազատագրական ու հակաֆեոդալական ժողովրդական շարժումների և անտիկ փիլիսոփայության ազդեցության տակ և իր աշխարհայացքում արտացոլում էր ժամանակի առաջավոր սոցիալ-քաղաքական շարժումները, բնագիտության և փիլիսոփայության շատ հարցերում դուրս է գալիս կրոնական դոգմատիկայի շրջանակներից։ «Ժամանակի անխուսափելի իդեալիստական ձևի» մեջ նա հաճախ պաշտպանում է միջնադարյան եկեղեցական ուսմունքին հակասող տեսակետներ։ Նա մերժում է կույր հեղինակապաշտությունը, հավատում է մարդկային իմացության կարողությանը, հավատը իմացության ելակետ չի համարում, քննադատում է կրոնական շատ տեսակետներ, գտնում է, որ բնությունը նույնպես ճշմարտության աղբյուր է և միստիցիզմին հակադրում է գիտությունը։

Շիրակացու երկերի ներքին տրամաբանությունն այն է, որ եկեղեցու սուրբ հայրերը նույնպես սխալական են։ Այս հիման վրա նա մի դեպքում քննադատում է Փիլոնին, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Աստվածաբանին և այլոց, իսկ մի այլ դեպքում համաձայնվում է նրանց հետ։ Հաճախակի, նշելով, որ տվյալ տեսակետն ընդունված է եկեղեցու կողմից՝ Շիրակացին միաժամանակ համարձակվում է այն չընդունել. օրինակ՝ «Բայց ոմանք յեկեղեցոյ ասացին, թէ առանձին ունի լուսինն զլոյսն և ոչ յարեգականէ... բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան յարեգականէ ասել»[7]։ Որ այս պնդումը հակաեկեղեցական է՝ ապացուցվում է Տիմոթեա վարդապետի հետևյալ վկայությամբ. «Որք ասեն լուսին լոյս առնու յարեգակէ, ոչ տա թոյլ բանն (ավետարանն), որ ասէ՝ զլուսաւորն Փորր յիշխանութիւն գիշերոյ»։ Շիրակացին եկեղեցական տեսակետն անընդունելի է համարում, քանի որ դրանով անհնար կլիներ բացատրել լուսնի փոփոխությունները ու խավարումների առաջացումը։ Մի այլ առթիվ նշելով, որ «եկեղեցականք ասացին թէ այն որ երևին ի լուսնի (խոսքը բծերի մասին է) երկիր է այն և ծով... ըստ բանին (ավետարանի խոսքի), որ ասէ, թէ

[5] Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1950, էջ 290։

[6] В. И. Ленин, Философские тетради, Москва, 1947, стр. 264.

[7] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և Տոմար, Երևան, 1944, էջ 39—40։

[8] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր 1981, էջ 182ա—182բ, տե՛ս նաև Եղիշե Վարդապետի «Հաղորդումներ պատասխանիք, ի Գիրս ծննդոց» Վիեննա, 1928, էջ 30—31։

[9] Հայ իրականության մեջ այդ տեսակետն են պաշտպանել Եղնիկ Կողբացին, «Եղծ աղանդոց»-ում վանական վարդապետը—«Յաղագս տարեմտի» գործում, ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտ. աշխ. ժող.», № 1, 1941, էջ 161, և Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց»-ում։

լուսին է հայելի աշխարհի»[9]՝ Շիրակացին ավելացնում է. «ես ցուցից քեզ ի սակաւ նմանութեանց առնուլ օրինակ»[10]։ Շիրակացին ընդունում է այն գիտական տեսակետը, թե լուսնի մակերևսի անհարթության պատճառով արեգակից ստացված լույսը չի արտացոլվում և դրա համար էլ այնտեղ սպիներ են երևում։ Առանց եկեղեցականը քննադատելու՝ նա հաճախ զարգացրել է այնպիսի տեսակետներ, որոնք փաստորեն հակասում էին եկեղեցու դոգմատիկային. ինչպես, օրինակ՝ երկրի գնդաձևության, երկրի ու ծովերի կազմության, երկրի դիրքի, երկնքի գոտիների և շարժման, խավարումների, արեգակի, լուսնի, տիեզերքի զարգացման մասին Շիրակացու տեսակետները։

Շիրակացին չի սահմանափակվում միայն եկեղեցականը կասկածի տակ առնելով։ Նա քննադատական մոտեցում է ցուցաբերում նաև Սուրբ Գրքի հանդեպ։ Նա գտնում է, որ աստվածաշունչը բոլոր գիտությունների և ճշմարտությունների աղբյուր հանդիսանալ չի կարող։ Կան այնպիսի ճշմարտություններ և նույնիսկ դիտության ամբողջ ճյուղեր, որոնք կա՛մ բոլորովին չեն բովանդակվում Սուրբ Գրքում և կա՛մ այնտեղ այդ մասին եղածը անբավարար է ու նույնիսկ սխալ։ «Յաղագս աշխարհագրութեանց յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ.— գրում է Շիրակացին,— այլ դոյզն ինչ դուն ուրեք և այն դժուարահաս և տաժանելի»[11]։

Չհավանելով Սուրբ գրքում եղածը, Շիրակացին դիմում է ոչ թե եկեղեցական տիեզերագիտությանը, օրինակ, Կոզմա Ինդիկոպլևսի, Գևորգ Պիսիդեսի, Բարսեղ Կեսարացու գործերին, այլ հեթանոս մտածողներին. «արդ վասն դի անհասք գոցա եղեալ, մեք հարկաւորիմք յարտաքինս ձեռնարկել»[12]։ Ավելին, նա վերջինս համարելով «ստոյգ աշխարհագրություն», այն հակադրում է կրոնականին։ Նա ընդունում է առաջինների տեսակետը, քանի որ այն հիմնված է նավարկության և ճանապարհորդության տվյալների վրա և ստուգված է երկրաչափությամբ։ Ընդհանրապես նրան ձգում է այն «միայն զոր կոխեաց ոտն և նստես ակն մարդոյ»[13]։ Անկասկած, այդպիսի դեպքում հավատը ոչ մի կերպ իմացության հիմք հանդիսանալ չէր կարող։

Աստվածաշնչի հանդեպ՝ այդպիսի վերաբերմունք ունենալով, Շիրակացին քննադատական մոտեցում է ցուցաբերում նաև այնտեղ արտահայտվող առանձին «ճշմարտությունների» նկատմամբ։ Շարադրելով Սաղմոս ԺԴ—2-ում արտահայտված այն միտքը, որ երկիրը հիմնված է ու կանգնում է ծովի վրա՝ Շիրակացին գրում է. «Զրոց ի վեր ունել զերկիր տարկուսին միտքս թէ զիա՞րդ ի վերայ այնչափ բնութեան ջուրց կայցէ անչափ ծանրութիւն երկրիս և ո՛չ ընկղմի, և ո՛չ զերծեալ փրծանի յամենայն կողմանց երկրէ սորեալ և ընկղմեալ ի ջուրս»[14]. մարդկային առողջ մտածողությունը հաղթանակում է կույր հավատին ու հեղինակապաշտությանը և միջնադարյան բնագետին առաջնորդում դեպի Սուրբ Գրքի դրույթի հերքումը։ Մարդու միտքը չի ընդունում աստծու հայանությունը համարվող սուրբ ճշմարտությունը։

---

[10] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 40—41։

[11] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, հրատ. Աշ. Արրահամյանի, 1943, Երևան, էջ 336։

[12] Նույն տեղում։

[13] Նույն տեղում, էջ 339։

[14] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 11—12, տե՛ս նաև Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 333։

Տեղեկագիր 7—4

Այս, սակայն, չի նշանակում, որ Շիրակացին հասնում է ամբողջ Սուրբ Գրքի հերքմանը։ Նրա ժամանակ դա անհնար էր։ Նա ընդունում է որոշ կրոնական տեսակետներ, բայց ոչ թե հավատքը հիմք ունենալով և ոչ էլ այն տրամաբանությամբ, որ դրանք սուրբերն են արտահայտել, այլ այն պատճառով, որ նա բանական է համարում դրանք։ Հավատը մարդկային իմացության նախապայման չէ, այլ ընդհակառակը հավատը ինքը պետք է հենվի մարդկային առողջ տրամաբանության վրա։ Նրա կրոնական համոզմունքները, հավատը, իմացությունը հիմնված է մարդկային իմացական կարողության նկատմամբ ունեցած իր վստահության վրա, մի բան, որը չէր ընդունում եկեղեցին։ Կորընթացիներին գրած իր թղթում Պողոս առաքյալը հավատացյալներին զգուշացնում է, որ չլինի թե նրանց «հավատը մարդկանց իմացությամբ հաստատվի և ոչ թե աստծո զորությամբ»[15]։

Եկեղեցին իր դոգմատիկ ճշմարտությունները մշակելու ժամանակ հանդիպեց մի նոր խնդրի. ինչ են այն ճշմարտությունները, որոնք արտահայտել են նախկին ոչ-քրիստոնյա մտածողները և որոնք համընկնում են քրիստոնեական ուսմունքի հետ։ Քրիստոնեական եկեղեցու շատ սուրբ հայրեր նրանց ես վերադրեցին նույն սկզբնաղբյուրը։ Ըստ նրանց, աստված, որպես հավիտենական-նապես գոյություն ունեցող, կարող էր իրեն դրսևորել նաև ոչ-քրիստոնյա մտածողների միջոցով։ Հովհան Ֆիլիպոնը պնդում էր, որ Պղատոնը Մովսեսից է վերցրել աշխարհի և մարդու ստեղծագործության ուսմունքը։ Հայ իրականության մեջ նույն միտքն է արտահայտել նաև Եղիշեն։ Սոկրատի, Պղատոնի, Քսենեֆոնի, Ամոնիոս Սակկասի մասին նա գրում է. նրանք «կաթոգին եղեն ի սեր միոյ կենդանաւորն աստուծոյ» և «պարկեշտ վարս ստացեալք հաւատովք, իմաստասէր կամաւք և բանիւ մերձ եկին առ նա (աստուած) հեռացեալ կոոցն»[16]։ Այսպիսի հարցադրումը պաշտոնական կապ էր ստեղծում անտիկ և միջնադարյան փիլիսոփայության միջև, բայց միաժամանակ դա ամրապնդում էր եկեղեցու այն տեսակետը, որ աստված ու Սուրբ Գիրքը ճշմարտության միակ աղբյուրն են։

Շիրակացին զարգացնում է այլ տեսակետ։ Նա «արտաքին իմաստասիրությունը» համարում է ճշմարտության առանձին աղբյուր։ Անտիկ միտքը, ըստ Շիրակացու, աստվածային հայտնության արդյունք հանդիսանալ չէր կարող, քանի որ անտիկ մտածողներին անհասանելի էր սուրբ երրորդության խորհուրդը։ «Ոմանք ասացին,—գրում է նա,—թէև սրբոյ երրորդութեան իմացան նոքա զխորհուրդս, զոր և երանելի աստուածաբանն Գրիգոր յիշէ ասելով, թէ յորժամ յաղագս առաջնոյ և ևս երրորդի պատճառին իմաստասիրէրն զայս ոմանք կարծեցին սրբոյ երրորդութեանն լինել խորհուրդ... բայց ես,— եզրափակում է Շիրակացին,— ոչ հաւանիմ, քանզի մարդկայինն իմաստութիւն այնմ մեծութեան ոչ եղև հասու». որովհետև ինքն աստված իրեն ծածկել է «զայս յիմաստնոց և ի գիտնոց»[17]։

Շիրակացին գտնում է, որ անտիկն աստվածային հայտնության արդյունք չէ։ Ընդհակառակը՝ եկեղեցու սուրբ հայրերն ու առաքյալները քրիստոնեական ուսմունքը ստեղծելու ընթացքում օգտվել են անտիկ ու հելլենիստական մշա-

[15] Առաջին թուղթ առ կորընթացիս, Բ. 5։

[16] Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» աշխատությունը, դիսերտացիա. գտնվում է Պետ. համալսարանի գրադարանում, էջ 115 – 116։

[17] Անանիա Շիրակացի, «Տիեզերագիտություն», էջ 2։

կույթից «Դաստիարակ եղեն—պնդում է նա,—մեզ առաջին իմաստասէրքն, զի նոցա տես քննութեամբն յորոց ճշմարիտքն ասացան և մեր հոգևոր հարանցն առաջնոցն ընկալեալ ի նոցանէ զտրամագիր ասացեալսն»[18]։ Այս պատճառով էլ Շիրակացին իրեն ազատ է զգում օգտվելու անտիկ և հելլենիստական փիլիսոփայական և բնագիտական մշակույթից։ Բայց նա անցյալի ոչ բոլոր տեսակետների և հեղինակների հետ է համաձայնվում, այլ այնպիսիների հետ, որոնք «բարի» են, չեն հակասում միաստվածության ուսմունքին։ «Ինձ ասելի է յարտաքնոցն բարեաց վկայութեանց,— գրում է նա,— որք զմիաստուածութիւնն խոստովանեցին». իսկ զանց առնել այն «բանդադուշեալ իմաստնոցն ճառիւք, որք զաստուած ոչ կամեցան ճանաչել և պատճառս լինելութեան զհիւղէ ասացին և նիւթ գոյիցս եղելոց»[19]։ Միջնադարյան պայմաններում «բարի փիլիսոփայի» այդպիսի ըմբռնումը ազատամտական է, քանի որ միաստվածություն էին ընդունում ոչ միայն քրիստոնեական աղանդները, այլ նաև հրեաները, մահմեդականները և այլք։

Համոզված լինելով, որ միայն եկեղեցականով, աստվածայինով չի սահմանափակվում մարդկային իմացությունը Շիրակացին բնությունը համարում է ճշմարտություններ ձեռք բերելու հավաստի աղբյուր։ Նա գտնում է, որ առանց ուսումնասիրության չի կարելի երևույթների էության մեջ թափանցել, իսկ առանց բնության չի կարելի ուսումնասիրություն կատարել։ Վերջին հաշվով, էության բացահայտումը բխում է ոչ թե հավատից ու աստծուց, այլ բնությունից։ «Զի ոչ է հնար ի ներհունս սաղապիլ թարց երկասիրութեան և ոչ երկասիրութիւն տարրանայ թարց բնութեան»[20],—պնդում է միջնադարյան հայ բնագիտության հիմնադիրը։

Պնդելով, որ բնությունն էլ իմացության աղբյուր է՝ Շիրակացին միաժամանակ ընդունում է աշխարհաճանաչողության հնարավորությունը։ Մարդիկ,— ասում է նա—«զքննութիւնս երկրի վարժին ուսմամբ ըստ երիցս այս դիմաց՝ շրջելով և տեսութեամբ և լսելով»[21]։ Նա համոզված է, որ բնության իրերն ու երևույթները ճանաչելի են. «իմաստնոցն յայտնի է իրացն եղելութիւն որպէս բազում անգամ ասացաք»[22]։

Որոշ դեպքերում, սակայն, թվում է, թե Շիրակացին հակվում է դեպի սկեպտիցիզմը։ Օրինակ, լուսնի և արեգակի մասին խոսելով՝ նա գրում է. «Նիւթ ամանոյ... նմա միայն է գիտելի, որ արարն զնա»։ Բայց մի քանի տող ներքևում այդ անճանաչելի համարվող իրերի մասին նա հայտնում է իր որոշակի կարծիքը. լուսինն ու արեգակը են «տարր սեղմ, խիստ մաքուր, գնդաձև»[23]։ Նրա համար աշխարհաճանաչողությունը հնարավոր է, «քանզի զաշխարհս կարգեաց ի վարձս դպրութեան մարդկան»[24]։ Սակայն նա անճանաչելի է համարում աստվածայինը, գերբնականը. «Յաստուածային խորս իմաստից,—պնդում է նա,—մարդկան մտածմունք ոչ կարացին իջանել»[25]։ Մի այլ դեպքում նա գրում

[18] Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, «Տիեզերագիտություն», էջ 30։
[19] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, էջ 1։
[20] Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Մատենագրություն, էջ 241։
[21] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, էջ 319։
[22] Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Տիեզերագիտություն, էջ 59։
[23] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, էջ 39 և 47։
[24] Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, Մատենագրություն, էջ 238։
[25] Ն ո ւ յ ն տ ե ղ ո ւ մ, էջ 319։

է. «Ոչինչ պատճառ յաղագս այս կարեմ ասել, բայց միայն զմարգարէական բանն»[26]։

Շիրակացին համոզված է, որ բնությունը ստեղծագործված լինելով հանդերձ, նյութական է իր օրինաչափությամբ, որ նյութական տիեզերքի էությունը գտնվում է իր մեջ և ոչ թե իրենից դուրս՝ ստեղծագործ ոգու մեջ։ Ըստ նրա, աստված բնությունն ստեղծելուց հետո ընդհանուր առմամբ չի միջամտում նրա զարգացման նորմալ ընթացքին[27]։ Բնության զարգացման պատճառ հանդիսացող «ապականութեան ու լինելութեան անվնաս հակառակութիւնը» ամբողջությամբ վերցրած և նրա առանձին ծայրաթեւեր՝ լինելությունն ու ապականությունը բնական են ու բխում են նյութական իրերի և երևույթների էությունից[28]։ Այստեղից էլ բխում է Շիրակացու այն համոզմունքը, որ իրերը ճանաչում ենք «ոչ որպէս կամին, այլ որպէս գոյացութիւն»[29]։

Բնության իմացությունը, ըստ Շիրակացու, սկսվում է զգայությունից։ Մարդկային զգայարանները «զննելով տեսանել և քննել զաշխարհս ծանիցէ զգալովքս զիմանալիսն և լսելեաւքն ի ներքս ընդունել զրանն կենաց յաւիտենականաց»[30]։ Ձայնը և լույսը պետք է «ի մօտ հասանէ», որպեսզի մարդ իմանա նրանց գոյությունն ու որակները[31]։ Ճանաչողության պրոցեսում զգայությանը վերագրված կարևորության մասին է խոսում նաև Շիրակացու այն միտքը, որ «զգայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուցս, զոր վկայեն բաղումք. վասն որոյ ոչ միայն զարեգական զնացս կարեցին նկատել, այլ և զբոլոր լուսատուացս կարացին դրոշմել և ճանաչել, և ոչ միայն զորպիսութիւն զնացիցն, այլև զշնչումն ձայնից նոցա»[32]։ Կարևորն այստեղ այն է, որ Շիրակացին փորձում է համաշխարհային ներդաշնակության Պիտագորյան ուսմունքին սենսուալիստական մեկնություն տալ։ Շիրակացին գտնում է, որ «արուեստ երաժշտականութեան աշխարհի» առաջացել է այն պատճառով, որ նախնիները ընդունակ էին ավելի լավ զգայելու։ Նրա համար անտարակուսելի է, որ ամեն ինչ, նույնիսկ այդպիսի դատարկ աբստրակցիաները, հնարավոր են զգայության։

Շիրակացուն ծանոթ են դեպքեր, երբ զգայական տվյալները խաբուսիկ են, բայց և այնպես, նա այդ փաստերից ագնոստիկական եզրակացություններ չի հանում, այլ աշխատում է բացատրել դրանց պատճառները։ «Մի խափեսցէ զքեզ.—նախազգուշացնում է նա.—սակաւ տեսիլ նորա՝ որ քան զչափ կանգնոյ միոյ երևի և կարծիցես թէ այնչափ իցէ»[33]։ Հեռավորության վրա իրերը փոքր և ձևափոխված են ընկալվում. նավը երևում է որպես աղավնու ձագ, եզը՝ որպես մրջյուն, լեռները՝ որպես կապակցված շղթա, քառակուսի աշտարակները՝ կլոր. կարող է պատահել նաև, որ «զլուսնն իբրև զմոտայլ տեսանես»[34]։ Ըստ Շիրա-

[26] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 90։

[27] В. К. Чалоян, Основные вехи развития философской мысли в Армении (V—XVIII вв.). Труды Сектора философии АН АрмССР, т. 1, 1950 г., стр. 121. Հ. Գարիբեյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. I, Երևան, 1956, էջ 523։ Գ. Խրլոպյան, «Անանիա Շիրակացի», «Սովետական մանկավարժ», 1957, № 12, էջ 23։

[28] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 31։

[29] Նույն տեղում, էջ 6։

[30] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 244։

[31] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 36—37։

[32] Նույն տեղում, 83—84։

[33] Նույն տեղում, էջ 56։

[34] Նույն տեղում, էջ 56—57։

կացու, այդպիսի ընկալումները հետևանք չեն ոչ մարդու զգայարանների ճանաչողական կարողության սահմանափակության և ոչ էլ իրի ու երևույթի անճանաչելիության, այլ օբյեկտից աչքին արտացոլվող լույսի յուրահատկություններին, «Քանզի մեծամեծ ինչ իրք որ ի բացեայ ի հեռուստ տեսանէր,իբր փոքունք երևին,—գրում է նա,—վասն զի քայքայի սակաւ տեսիլն ականն ի տկար զօրութենէ լուսոյն զոր ունի, քանզի չլինի <լոյսն> բաւական ի հեռաձիգ վայրս հասուցանել զհայեցուածսն այլ ի տեսիլն»[35]։

Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Շիրակացին զգայությունը համարում է ոչ միայն ճանաչողության սկիզբ, այլ նաև մեր զգայարանների վրա արտաքին աշխարհի իրերից ստացված գրգռիչների ներգործության հետևանք։ Շիրակացու համար զգայության օբյեկտը գտնվում է զգայարանից դուրս։ Լենինը «Փիլիսոփայական տետրակներում» Արիստոտելի համանման մտքի առթիվ գրում է. «մեխն այստեղ (Արիստոտելի զգայության և իմացության տեսակետների շարադրման մեջ) «գտնվում է դուրս»—մարդուց դուրս, անկախ նրանից։ Դա մատերիալիզմ է»[36]։

Իր ժամանակի գիտության տվյալների հիման վրա բացատրելով սխալ ընկալման պատճառները, Շիրակացին միաժամանակ ընդգծում է, որ վերջին հաշվով իրի հետ անմիջական շփումն ու դիտողականությունը զգայության ճշտության չափանիշն են. «և դիտեա թէ, ամենայն մեծ իրք ի հեռաստանէ փոքունք երևին, և յորժամ երթաս մօտիս, ապա ստուգես՝ թէ մեծ է և ոչ փոքր»[37]։ Նա սակայն, նկատում է, որ ոչ բոլոր իրերն ու երևույթները կարելի է անձամբ ստուգել. ինչպես, օրինակ, երկնային մարմիններն ու պրոցեսները։ Արևը «ոչ կարես տեսութեամբ ուսանել», քանի որ ծակում է մարդու աչքը[38]։ Այդպիսի դեպքերում նա օգտագործում է «անուղղակի փորձի» նման մի բան։ Զգայական ընկալումների սահմաններից դուրս գտնվող այդ իրերի ու երևույթների մասին ընկալվածը ստուգելու համար նա դիմում է երկրային մարմինների ու երևույթների օրինաչափություններին։ Երկրակենտրոն ընդհանուր տեսակետից ելնելով՝ նա երկնայինը բացատրում է երկրային օրինաչափությունների հիման վրա։

Շիրակացին բնության ճանաչողությունը չի սահմանափակում միայն զգայականով։ Նա բերում է բազմաթիվ օրինակներ, երբ երևացողը, միայն զգայական տվյալը ոչ ճիշտ պատկերացում է տալիս բնական օրինաչափությունների մասին։ Մակերևայնությունը, ըստ նրա, յուրահատուկ է տգետներին՝ «անուսումության»։ Լուսնի և արևի խավարումները «տեսանելով բազումք յանուսումնութենէ՝ արեգական կորուստ կարծեն»[39]։ Անհրաժեշտ է ոչ թե սահմանափակվել երևույթների արտաքին կողմով, այլ թափանցել նրանց էության մեջ։ Դա հնարավոր է կատարել ոչ թե զգայությամբ, այլ ավելի բարդ մտածողական պրոցեսով. անհրաժեշտ է «անցանել տեսութեան ի վեր»։ Այս տեսանկյունից նա քննադատում է նաև աստղաբաշխներին, որոնք միայն արտաքինով սահմանափակվելով չեն ներթափանցում երևույթների էության մեջ և այդ պատճառով էլ հանգում են հակագիտական եզրակացությունների՝ բնությանը վերագրում են գերբնական հատկություններ։ Նրանք «չկարացեալ վերաբերիլ և

[35] Նույն տեղում, էջ 56։
[36] В. И. Ленин, Философские тетради, стр. 267.
[37] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, 55—56։
[38] Նույն տեղում, էջ 49—50։
[39] Նույն տեղում, էջ 59։

անցանել ըստ տեսութեան զարդուդ ի վեր, և առ պատճառաւն վերին ոչ կարացեալ հասանել. զդոսին իսկ տեսեալ գլուսաւորս և գխոտմբս զարդուդ՝ զի արարողք են և աստուածս կարդացին»[40]։ Շիրակացին ճիշտ փաստից կատարում է սխալ եզրակացություն։ Ընդգծելով զգայականով սահմանափակվելու վտանգները և այն, որ անհրաժեշտ է թափանցել «առ պատճառս», հանդում է այն եզրակացության, որ վերջին պատճառը աստված է։ Դա բնորոշ է նրա օնթոլոգիայի համար և ժամանակի դաղափարախոսության հետևանք է։

Շիրակացին նկատում է, որ լինում են դեպքեր, երբ բացակայում է պատճառ հանդիսացող իրը կամ երևույթը, որի հետևանքով նրա մասին «պարտ է նկատել մտօէք»։ Օրինակ՝ տեսնելով կնքված թուղթը՝ մարդ պետք է մտածի, որ գոյություն է ունեցել այն կնքող կնիքը, և որ այդ թուղթը միշտ կնքված չի եղել, այլ ունեցել է սկիզբ[41]։ Եվ վերջապես, բոլոր տեսակի մտավոր երևույթները անիմանալի են զգայությամբ։ Հարկավոր է դրանք քննել այլ կերպ. «իսկ արդ որովհետև ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է թէ և յանմարմինն ելցուք տեսակ»[42]։

Շիրակացին զգայարանները համարում է անցքեր, դարբասներ, որոնք միտքը կապում են արտաքին աշխարհի հետ. «յոթ (են) և ծակք զգայութեան,— գրում է նա,—երկու աչաք, երկու ականջաք, երկու ծծոց քմաց և մի ճաշակելեաց, որ ունի մուտ մահկանացուին և զել անմահին բանականի»[43]։ Այլ աշխատության մեջ, որը որոշ վերապահումներով կարելի է վերագրել Շիրակացուն, նա զգայարանները նմանեցնում է պարիսպների դռներին, որոնք մուտք են տալիս դեպի քաղաք, այնպես, ինչպես «տեսանելն ու լսելն (են) դուռն խորհրդոյ»[44]։ Նույն միտքն է նա զարգացնում, երբ պնդում է, որ «հինգ զգայութեանցս (աչք, ականջ, քիթ, բերան, շոշափելիք) է մաքրութիւն, ընդ որս խայթոցք մեղացն մտին։ Զի հինգ զգայութիւնք են տեղի պատերազմի ախտից»[45]։

Ճանաչողության պրոցեսում իրենց կարևորության տեսակետից Շիրակացին մարդկային զգայարանները բաժանում է երկու խմբի։ Տեսողությանն ու լսողությանը նա վերագրում է ավելի բարձր իմացական կարողությունն, քան ճաշակելիքին, շոշափելիքին ու հոտոտելիքին։ Ըստ նրա, առաջինները ավելի անմիջականորեն են կապված մտածողության հետ, քան երկրորդ խմբում թվարկվածները, որոնք ավելի կոպիտ են, ստորադաս։ Շիրակացին այդպիսի բաժանման հիմքում դնում է այդ զգայարանների միջոցով ստացված զգայությունների ու մտածողության փոխհարաբերությունը, զգայարանների ճանաչողական նշանակությունը։ «Զտեսանելիսն և զլսելիսն,—պնդում է,— զի սոքա ի զգայութեանցս, որ աղատաբար յիմաստասիրութեան խոկումն ամբառնան. իսկ զերիցն՝ ճաշակելեացն, շոշափելեացն, հոտոտելեացն, ասեմ, որք յախնթորակագոյնք են և հեշտութիւնս ըմբռնին»[46]։ Նրա համար կասկածից դուրս է զգայության և մտածողության փոխհարաբերությունն ու կապը։ «Հինգ զգայու-

[40] Նույն տեղում, էջ 19։
[41] Նույն տեղում, էջ 5։
[42] Նույն տեղում, էջ 3։
[43] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 245։
[44] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռ. 641, էջ 33ա 36ա և ձեռ. № 788, էջ 232ա, Նորին Բան յաղագս խորհրդոյ զգուշութեանն։
[45] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 213։
[46] Նույն տեղում, էջ 244։

թիւնքս սպասաւորելով մտացն իբր թագաւորի»[47]։ Նա գտնում է, որ ինքը բնութիւնն այնպիսին է, որ անհնար է այն միայն զգայությամբ ճանաչել։ «Զի են որք ի տեսութեան աչաց են և են՝ որք յիմանալեաց քննութեան»[48]։ Հավանաբար այդպիսի բաժանումը հետևանք է Արիստոտելի այն պնդման, ըստ որի աշխարհի իրերը բաժանվում է երկու խմբի. առաջինում նա դասել է այն օբյեկտները, որոնք ընկալվում են առանձին զգայարանների միջոցով՝ ձայնը, գույնը և այլն, իսկ երկրորդում՝ այն երևույթները, որոնք ճանաչելի են միանգամից մի քանի զգայարանների կամ բոլոր զգայարանների համատեղ գործունեության հետևանքով[49]։

Միջնադարյան հայ բնախույզը, այսպիսով, զգայությունը համարում է ճանաչողական ավելի ցածր և պարզ ստադիա, իսկ մտածողությունը ավելի բարձր ու բարդ։ Մտածողությունը թագավոր է, իսկ զգայությունները՝ նրա ծառաներ. «և միտք մեր մինչ խոկասցեն յերկիւղ պատուիրանին, լինէին հաւկատու և ծառայ հինգ զգայութիւնքս՝ սպասաւորելով մտացն իբր թագաւորի,— գրում է Շիրակացին,— որք յախտից աղատեալ միտքն առնուն ի կիր սոքաւք վարել ի վարժս կրթութեան՝ զննելով տեսանել և քննել զաշխարհս ծանիցէ զգալովքս զիմանալիսն և լսելեաւքն ի ներքս ընդունել զբանն կենաց յաւիտենականաց»[50]։ Մյուս կողմից մտածողությունը զգայարանների հետ կապված է, քանի որ նրանց միջոցով միտքը դրսևորում է իրեն ու վերածվում է գործի։ Մարդ նախ մտածում է և ապա գործում։

Մտածողությունը ավելի բարձր համարելով հանդերձ՝ Շիրակացին չի խուսափում միայն էմպերիկ տվյալների վրա հենվելուց, եթե մտածողությունը դեռևս չի կարողացել ճիշտ, ընդունելի եզրակացության հասնել. «Բայց թէ և է շուրջ զանծանաւթ երկրաւ ծով կամ շուրջ զանազանաւթ ծովու երկիր,— գրում է նա,— մեք անհաս եղեալ մտածութեանց լռեմք և գրեմք զայս միայն, զոր կոխեաց ոտն ու ետես ակն մարդոյ»[51]։

Բոլոր դեպքերում էլ մարդկային միտքն ու գործունեությունը, ըստ Շիրակացու, պատկանում են հենց իրեն մարդուն և բոլորովին էլ հետևանք չեն գերբնական թելադրության կամ պարգևի։ «Տեարք եմք մտաց և գործոց մերոց, և այսմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՝ բարիք և չարիք ոչ ի կամաց մարդոյն լինեին»[52]։ Եթե մարդկային մտածողությունն ու գործունեությունը հետևանք լինեին ինչ-որ կանխորոշող ուժի, ապա կթուլանար, կպասսիվանար և կդադարեր զարգանալ մարդկային միտքը, մարդիկ կհրաժարվեին սովորելուց ու աշխատելուց, քանի որ դրա կարիքը չէր զգացվի. կլիներ ըստ ճակատագրի կանխագուշակության։ Այդ դեպքում «մեծավաստակն արուստագիտաց (ջանք) ընդունայնուսույր է»[53]։

Մտածողությունը համարելով իմացության ավելի բարձր աստիճանը և այն կապելով զգայական տվյալների հետ՝ Շիրակացին եզրակացնում է, որ մարդկային մտածողությունը ենթակա է զարգացման. Մարդու միտքը յոթ տա-

[47] Նույն տեղում. 244։
[48] Նույն տեղում, էջ 318։
[49] Նույն տեղում։
[49] Արիստոտել, Հոգու մասին, Բ, 6 և Գ, 1։
[50] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 244։
[51] Նույն տեղում, էջ 339։
[52] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 26։
[53] Նույն տեղում, էջ 28—29։

ռեկան հասակում ձեռք է բերում հասունության այնպիսի աստիճան, երբ նա կարող է անցնել սիստեմատիկ ուսման։ «Մանկունքն յոթ ամեայք առնլիք են ի վարժումն, զի և մտաց հասողութիւն և փոխումն ատամանց»[54]։

Շիրակացին սակայն, տարբերություն է դնում մտածողության ու բանականության միջև։ Ըստ նրա, առաջինը հետևանք է արտաքին աշխարհից ստացված տպավորությունների, իսկ բանականությունը՝ աստվածատուր է և ոչ մի կապ չունի նյութական աշխարհի հետ։ Զգայության և մտածողության միջոցով մարդ ճանաչում է բնական ընթացքով զարգացող բնությունը, իսկ բանականության միջոցով նա գիտակցում է աստծո ու նրա գերբնական գործերի գոյությունը։ Մարդկային զգայությունն ու մտածողությունը աստվածատուր հոգու մեջ չեն մտնում, իսկ բանականությունը՝ անմահ հոգու բաղկացուցիչ մասերից մեկն է։

Շիրակացին պնդում է, որ մարդկային հոգին անսկիզբ չէ, սուբստանցիա չէ. Աստված ստեղծել է ինչպես նյութը, այնպես և մարդկային հոգին։ Նա չի վիճարկում եկեղեցու հաստատած այն «ճշմարտությունը», թե հոգին աստվածային փչումն է, սակայն շեշտը դնում է հոգու ստեղծագործված, առաջացած լինելու հանգամանքի վրա։ Մարդկային հոգին տիեզերական հոգու մի մասնիկը չէ, այն աստծուց փոխանցված չէ մարդուն, այլ նյութի նման ստեղծագործված է առաջին շարժիչի կողմից։ Ստեղծագործության տեսակետից, այսպիսով, հոգին ու մարմինը ոչ հանուր եղբեր ունեն։ «Զհոգին փչումն աստուածային ասացին,— գրում է Շիրակացին,— և ոչ նիւթական արարած՝ այլ աննիւթ, թէպէտ և արարած և գիտելի է նմա միայնոյ՝ որ արար զնա»[55]։ Շիրակացին, այսպիսով փաստորեն ընդունում է մարմնի և հոգու միաստեղծության արիստոտելյան գաղափարը։

Հարցի այդպիսի լուծմանը որոշ չափով նպաստում էր միարնակության այն հիմնական թեզը, որ Լակը կարող է բազմաթիվ մասերից բաղկացած լինել, բայց հանդես գալ որպես մի ամբողջականություն և ունենալ մի բնություն։ Մարդու մարմինը բաղկացած է չորս տարրերից, բայց նա ամբողջական մի օրգանիզմ է, մարդու հոգին բաղկացած է երեք մասերից, բայց հոգին մեկ է, մարդը ինքը հոգուց և մարմնից է, բայց այդ երկուսի միասնությունից դուրս որպես այդպիսին նա գոյություն ունենալ չի կարող։ Միաբնակ եկեղեցու այդպիսի տեսակետը հնարավորություն էր ստեղծում, որ առաջավոր մտածողները կարողանան այս հարցում զարգացնել արիստոտելյան դրույթները։ Շիրակացին պատկանում է այդպիսի իմաստասերների թվին։

Մինչդեռ իրեն նախորդող հայ մտածողները գտնում էին, որ հոգին բաղկացած է 3 մասերից, Շիրակացին այն բաժանում է չորսի։ Զարգացնելով Արիստոտելի գիծը՝ նա ընդունում է, որ հոգին իր մեջ պարունակում է բանը, ցասումն ու ցանկությունը, իսկ չորրորդ մասը նա համարում է արդարությունը, որը Դավիթ Անհաղթը բնութագրում էր որպես հոգու մասերը միացնող առաքինություն՝ «և զի այսորիկ են մասունք հոգւոյ՝ բան, ցասումն և ցանկութիւն և սոցա պիտոյ է դաստիարակ, որ է արդարութիւն, որով զարդարեալ կատարին մասունք ոգւոյն»[56]։ Աննյութական հոգին, ըստ Շիրակացու, չորս նյութական տարրերի նման ստեղծագործության ժամանակ կատարյալ չի եղել։ Եթե տար-

[54] Նույն տեղում, էջ 62 և Մատենագրություն, էջ 245։
[55] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 4։
[56] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 241։

ները հարաբերակցելով ձևեր են բերել նոր որակներ[57], ապա հոգին մարդկային գործունեության հետևանքով հարստացել է նոր կարողությամբ կամ նոր մասով։ «Եվ վարձ աշխատելոց է պսակ,— պնդում է Շիրակացին,— որպես ոգի բնականաբար թարձ աշխատութեան ունի զեռաթիւ մասունս յաստուծոյ ստացեալ, իսկ մառորդն մերոյ աշխատութեանց է, զիւտ, ոգւոյ բաղձելոյ զարմից»[58]։ Հոգու և մարդկային գործունեության այդպիսի փոխհարաբերությունը հետևանք է այն բանի, որ ըստ Շիրակացու հոգին ու մարմինը սերտորեն կապված են իրար հետ. չկա մարդ առանց հոգու, չկա հոգի առանց մարմնի։

Այստեղից կարող ենք հանդել այն եզրակացությանը, որ մարդկային հոգու «յաստուծոյ ստացեալ անաշխատ» մասերը փայլում են, դաստիարակվում ու զարգարվում են մարդկային գործունեությամբ նվաճված արդարության միջոցով։ Ավելին՝ ջանասիրության, աշխատանքի այդ արդյունքով «կատարին մասունք հոգւոյն»։ Մյուս կողմից՝ այդպիսով զարգացվում է այն տեսակետը, որ արդարությունը, իրավունքը, աստծո կողմից հաստատված չեն, գերբնական չեն, այլ մարդկային ազատ կամքի գործունեության հետևանք։ Հայ եկեղեցու ընդունած կամքի ազատության ուսմունքից Շիրակացին հանգում է ավելի հեռուն գնացող եզրակացությունների. արդարությունը մարդկային է, բայց հոգու բաղկացուցիչ մասն է կազմում։

Եթե արդարությունը հետևանք է մարդկային գործունեության, ապա ցանկությունը (ցանկականը) արթնանում է, իրականանում է արտաքին աշխարհից ստացված դրդապատճառների կամ գրգռիչների հետևանքով։ Ցանկությունը մարդկային հոգում առկա է որպես պոտենցիալ կարողություն, որն ակտիվանում է ու իրականանում արտաքին աշխարհի գրգռիչների ազդեցության տակ։ «Այսպես,— գրում է նա,— ցանկութիւն առ մարդն լինի և լռեալ դադարէ և յորժամ տեսանէ դեմս գեղեցիկս և կամ լսէ երգս... յայնժամ բորբոքի ցանկութիւն»[59]։ Սա, ինչպես ակնհայտ է, հետևանք է Արիստոտելի՝ հոգու մասին ուսմունքի ազդեցության։ Ըստ Ստագրիտի, զգայականն իր հնարավորության մեջ որպես ձև պարունակվում է հոգու մեջ։ Հոգին այդ պոտենցիալ ձևերը զգայվող մարմնի օգնությամբ դարձնում է իրական։ Զգայարանում համապատասխան իմպուլս առաջացնելու համար անհրաժեշտ է, որ այն ենթարկվի արտաքին աշխարհի ազդեցության՝ անցկացնի «կրավորական վիճակ[60]»։ Նույն միտքն է արտահայտում Շիրակացին, երբ գրում է. զգայարանները «յախտից ազատեալ միտքն առնուն ի կիր սոքաւք վարել ի վարժս կրթութեան՝ զննելով տեսանել և քննել զաշխարհս[61]»։

Իսկ հոգու բանական մասը Շիրակացին ամբողջությամբ կտրում է օբյեկտիվ իրականությունից։ Ինչպես տեսանք, նա զգայությունն ու մարդկային մտածողությունը համարում է արտաքին աշխարհից ստացված ազդեցությունների ու տպավորությունների հետևանք։ Այստեղ կասկած չկա իմացության օբյեկտիվության նկատմամբ. նա հավատում է մարդկային մտածողության կարողությանը և իմացության օբյեկտիվ ճշմարտության ուժին։ Բայց նույն գնահատա-

[57] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 4։

[58] Անանիա Շիրակացի, Մատենագրություն էջ 241—42 (ընդգծումը մերն է)։

[59] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր 788, էջ 281բ։

[60] Արիստոտել։ Հոգու մասին, Բ, 5 և Դ, 2։

[61] Անանիա Շիրակացի։ Մատենագրություն, էջ 244։

կանը մենք տալ չենք կարող Շիրակացու բանականության ըմբռնմանը, քանի որ բանականությունը նա տարբերում է մտածողությունից։ Այդպիսի հարցադրումը փաստորեն Արիստոտելի՝ «գործունյա և կրավորական բանականության» փոխհարաբերության մասին ուսմունքի միակողմանի ազդեցության հետևանք է։ Ըստ Արիստոտելի, հոգու այն մասը, որ զգայություն, երևակայություն, հիշողություն, կամք և միտք է, ենթակա է երկրային օրինաչափություններին և անմահ չէ։ Հոգու մեռնող այս բաղադրիչները մարդկային հոգում եղող իդեաների այն մասն են, որոնք հետևանք են մարմնային ազդեցությունների, այսինքն՝ այն, ինչ ստացվում է, կրվում է, և ինքը չի ստեղծում։ Առանց բանականության այդ կրավորական մասի, ըստ Արիստոտելի, մարմինը անպատկերացնելի է[62]։ Ինչպես տեսանք, նույն ձևով Շիրակացին բացատրում է զգայություններն ու մտածողությունը, որոնց միջոցով մարդ ընկալում է նյութական աշխարհի իրերն ու երևույթները ու նրանց օրինաչափությունները։ Բայց Արիստոտելը «բանական հոգու» մեջ տարբերում է նաև գործունյա, ակտիվ բանականությունը, որը բնության արդյունք չէ և ոչ էլ հոգու զարգացման հետևանք, այլ մի բացարձակ սկզբունք է, որը գոյություն է ունեցել հոգուց և մարմնից առաջ և առանց որի կրավորական բանականությունը չի կարող մտածել ու գործել։ «Անհնար է <ակտիվ> բանականությունը կապված լինել մարմնի հետ»[63]։ Գործունյա բանականությունը Ստագրիտի համար սկիզբների սկիզբ է, ինքն իր համար մտածող սկիզբ, կամ ձևերի ձև[64], «Այս բանականությունը անցողիկ է և առանց գործունյա բանականության ոչինչ անել չի կարող»[65]։ Ըստ Արիստոտելի, մարդիկ այս բանականության միջոցով իմանում են սուբստանցիայի մասին, պատճառների պատճառի մասին, առաջին շարժիչի՝ աստծո մասին։ Այդ բանականությունը, այսպիսով, կարողանում է միջնորդ լինել մարդու և աստծո միջև։ Արիստոտելի ուսմունքի այս կողմն է արտահայտվել Շիրակացու բանականության հասկացողության մեջ։

Բանականությունը, Շիրակացու կարծիքով, աստվածատուր է, աննյութական, և ոչ մի կապ չունի զգայության և զգայականի հետ։ Նա նման է աստծուն։ Նրա միջոցով մարդիկ իմանում են աստծո գոյության մասին. «սկսանելին (առաջին շարժիչը) ասի յանսկիզբն է ումեմնէ. ապա ուրեմն անսկիզբն անասաց և անճառելի մնաց, սակայն իմանալեաւն իմանի։ Իսկ որ իմանի՝ ապաքէն մատցն իմանի։ Իսկ միտքն դի՞արդ կարասցեն հասու լինել անճառելոյն, եթէ ոչ ունիցի յանգութիւն ի նմին իմանալոյն, իսկ որ ունի յանգութիւն, բերէ և զնորին հշմարտութիւն[66]»։ Մարդկային մտածողությունը բանականությունից տարբերելու և այն հոգու մաս չհամարելու ուսմունքի գոյության մասին է վկայում նաև Հովհաննես Երզնկացին։ «Ոմանք իմաստնոց ասացին յերից հաստիլ զմարդն, ի մարմնոյ, ի հոգոյ և ի մտաց այլ ասելով զհոգի, և այլ զմիտս։ Բայց ոմանք ոչ որոշեցին ի հոգոյ զմիտս, այլ նորին էութեանն իշխանական զոյ զիմայականն համարեն, այսինքն՝ զմիտս»[67]։ Շիրակացին պատկանում է առաջին խմբի մտածողների շարքին։

---

[62] Արիստոտել, Հոգու մասին, Գ, 5 և Բ, 9։
[63] Նույն տեղում, Գ. 4։
[64] Նույն տեղում, Գ. 8։
[65] Նույն տեղում, Գ. 5։
[66] Ականիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 3։
[67] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր 2173, էջ 321 բ։

Այս հարցը միաժամանակ, սերտորեն առնչվում է գիտությունների այն բաժանման հետ, որը գալիս է Արիստոտելից։ Ինչպես հայտնի է, անտիկ աշխարհի մեծ մտածողը իր «Մետաֆիզիկայում» գիտությունները բաժանել է երեք խմբի. տեսական գիտություններ (մաթեմատիկա, ֆիզիկա և առաջին փիլիսոփայություն). գործնական գիտություններ, (էտիկա, պոլիտիկա և այլն) և ստեղծագործական կամ պոետիկա։ Առաջին փիլիսոփայությունը, որը նա համարում է գիտությունների գիտություն, զբաղվում է գոյի անփոփոխ սկիզբով, առաջին շարժիչի ուսումնասիրությամբ, որը, ինչպես տեսանք, կատարվում է բանականության միջոցով[68]։ Այսպիսի բաժանման հանդիպում ենք նաև Դավիթ Քերականի, Դավիթ Անհաղթի, Իբն Սինայի և այլոց մոտ։ Հարելով այդ տեսակետին Շիրակացին պնդում է, որ տեսական գիտություններով զբաղվողները պարտավոր են սկսել անմարմին, անսկիզբ սկզբից, որը նյութական գոյի պատճառն է, «ճշմարտիւ թուի ինձ և ամենացուն որք են ի տեսական ուսումնասիրութեան և ի քաջ առաջնոցն ասացեալքն բանի ոչ ինչ անճառելի է և մտաց ոչ ինչ հասանելի է. իսկ արդ, որովհետև ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է թէ և յանմարմինն ելցուկ տեսակ, ապա ուստի արժանն է, սկսանելի է, իսկ սկսանելին ասի յանսկիզբն է ումեմնէ»[69]։

Տեսական գիտությունների շարքում Շիրակացին կարևորագույն տեղը հատկացնում է մաթեմատիկային, երբ Արիստոտելի ու Իբն Սինայի մոտ դա վերապահվում է առաջին փիլիսոփայությանը կամ «աստվածային փիլիսոփայությանը», իսկ Անհաղթի մոտ մաթեմատիկան մի միջանկյալ օղակ է բնագիտության ու աստվածաբանության միջև։ «Յոյժ կարաւտեալ արուեստի համարողութեանն, խորհեցայ՝ եթէ ոչինչ յարմարի առանց թուոց մայր կարծելով ամենայն իմաստից»[70]։ Տեսական գիտությունների մյուս բաղկացուցիչ մասը «բնական իմաստասիրությունը», Շիրակացին համարում է գիտություն բնության մեջ «բնական բերմամբ» տեղի ունեցող երևույթների մասին, որոնք ճանաչելի են զգայության և մտածողության միջոցով[71]։

Ճանաչողության պրոցեսում Շիրակացին կարևոր տեղ է վերապահում «գործին», անմիջական դիտողությանը։ Նա որպես բնախույզ դիտում է երևույթները, ապա այն արձանագրում և հավաքած փաստերից հանում նոր եզրակացություններ։ Դոկտ. Աշ. Արրահամյանի հայտնաբերած մի նոր ձեռագիրն սկսում է այսպես. «Ես Անանիա Շիրակացիս անձամբ դիտելով լուսնի շարժումները արձանագրեցի հետևյալը»։ Նա պնդում է, որ «որք միտս ունեցին դիւրին է ի տեսութեանցն իմանալ»[72]։ Մի այլ դեպքում, համոզելու համար, որ լուսինը ավելի փոքր է, քան արևը, նա գրում է. «և ի տեսութենէ իսկ կարեմք իմանալ թէ մեծ է արեգակն քան զլուսին»[73]։ Սակայն նա դիտողականությունը չի սահմանափակում լոկ տեսողությամբ, այլ ճանաչողության պրոցեսում զգալի տեղ է հատկացնում գործիքների օգտագործմանը[74]։ Բայց դա դեռևս բավական չէ, հար-

---

[68] Արիստոտել, Մետաֆիզիկա, Զ, 1, 9, և ԺԱ, 7։

[69] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, էջ 2—3։

[70] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 206։

[71] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 319, 324, 336 և Տիեզերագիտություն, էջ 59, 92։

[72] Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն, էջ 48։

[73] Նույն տեղում, էջ 58։

[74] Անանիա Շիրակացի. Մատենագրություն, էջ 338։

կավոր է անձամբ ստուգել և տեսնել երկրային երևույթները։ Շիրակացին խիստ քննադատում է այն մտածողներին, որոնք անծանոթ երկրների մասին պատմում են այնպիսի բաներ, որոնց անհնար է հավատալ. «բայց ասի յանծանաւթ երկիրն, որ ինչ պատմեն՝ անհաւատալիք են. գազանք անձանաւթք, մարդակերք, կիսանձեայք, երդիմիք. վերձեռինք. փոկոտունք. վիշապատունք, կիսահաւք, կիսամարդք. անգլխաւք»[75]։ Այդ պատճառով էլ ինքը նախընտրում է չխոսել այն երկրների ու ծովերի մասին, որտեղ մարդիկ չեն եղել ու չեն տեսել. «և քան զայս կզգիս (Բրիտանացոյ և Սկանդրէ) նաւագնացութիւն չիք և ոչ հասեալ է մարդ անդ, վասն այնորիկ կոչի անծանոթ»[76]։ Նա նույնիսկ պնդում է, որ աշխարհագրության հիմքում պետք է ընկած լինի անմիջական ճանաչողությունը՝ ճանապարհորդությունն ու նավագնացությունը, որոնք իրենց հերթին պետք է կապված լինեն աստղագիտական դիտումների և երկրաչափական հաշիվների հետ։ Այս հիման վրա նա տարբերում է երկու բնույթի աշխարհագրություն՝ ստույգ և եկեղեցական։ Առաջինը հակադրելով երկրորդին՝ նա գրում է. «յարմարիցին ի ճանապարհորդութենէ և ի նաւարկութենէ և ստուգեցին յերկրաչափութենէ և ինքն յերկրաչափութիւնն զտաւ յաստղաբաշխութենէ»[77]։

Շիրակացին նկատում է մարդկային գործունեության կապը հոգեկանի և տեսական մտածողության հետ։ Ինչպես արդեն տեսանք, նա հոգու բաղկացուցիչ մասերից «արդարությունը» համարում է մարդկային գործունեության ու ջանքի հետևանք։ Բայց նա դրանով չի սահմանափակվում։ Նա ընդգծում է, նաև, որ «փորձը» տեսության հետ միանալով զարգացնում է մարդու իմացությունը։ Կիրառված և մարդկային գործունեությամբ հաստատված տեսությունը նա ավելի բարձր է դասում, քան մաքուր թեորիան։ «Ուսանիցէ որ արուէստ յումեքէ և զարուեստն ժամանակ ինչ ի գործ առկանէ, յայնժամ առաւել փիանա քան որ ի վարդապետէն ուսաւ»[78]։ Անկասկած այս ավելի քան համարձակ է հնչում վաղ միջնադարի պայմաններում, երբ տեսական միտքը փորձում էին կտրել գործնականից, պրակտիկ աշխատանքը ստորադասում էին մտավորի նկատմամբ, երբ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակասությունը սրված էր։ Ֆիզիկական աշխատանքի հանդեպ Շիրակացու ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի մասին է խոսում նաև այն, որ նա իր տոմարը կազմելիս և լուսնի շրջագայությունների ցուցակները դրելիս հաշվի է առել աշխատավոր գյուղացիության՝ շինականների մտավոր մակարդակը և ձգտել է այնպես կազմել, որ հասկանալի լինի նրանց. «և քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ շինականք. վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն և երկուց ամաց կազմեցի (տոմարս) ես Անանիա որդի Յովհաննիսի Շիրակայնոյ»[79]։ Սա մեկ անգամ ևս վկայում է, որ միջնադարյան հայ մեծ մտածողը մոտ է կանգնած եղել ժողովրդին, որ VII դարում ծավալվող ժողովրդական շարժումները իրենց ներդրությունն են ունեցել նրա գործունեության ու աշխարհայացքի վրա։

---

[75] Նույն տեղում, էջ 353։
[76] Նույն տեղում, էջ 340։
[77] Նույն տեղում, էջ 336։
[78] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 788, էջ 227ա։
[79] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 299։